

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սպիտակի համայնքապետարանի ենթակայության

մշակութային հիմնարկների վերաբերյալ

Սպիտակի համայնքապետարանի ենթակայության տակ գործում են 1 երաժշտական դպրոց, 1 գեղարվեստի դպրոց, 1 մշակույթի տուն, 1 գրադարան՝ թանգարանային բաժնով:

Սպիտակի երաժշտական դպրոցը գործում է Շահումյան 105 հասցեում՝ 1998թ. կառուցված հիմնական տիպային հարմարավետ, լուսավոր շենքում: Հիմնականում ապահովված է գույքով, սարքավորումներով և երաժշտական գործիքներով: Աշխատողների թիվը կազմում է 25 մարդ, որից 20-ը՝ դասատու, աշակերտների թիվը՝ 125 (100%-ով վարձավճարից ազատված են 22 աշակերտ-ազգային նվագարաններ, պետպատվեր ուսուցման ծրագիր): Ուսուցիչներն ունեն համապատասխան մասնագիտական կրթություն: Շենքը ջեռուցվում է լոկալ ջեռուցմամբ, ունի 150 նստատեղով 1 դահլիճ: Դպրոցի դահլիճը ծառայում է ամբողջ համայնքին և մարզին: Այնտեղ կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ, ելույթներով հանդես են գալիս համույթներ և խմբեր այլ համայնքներից: Դպրոցի սաները մասնակցել են Գյումրիում անցկացված երաժիշտ-կատարողների «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնին քանոն, դուդուկ, դաշնամուր, ժողովագարանների համույթ անվանակարգերում և արժանացել խրախուսանքների, իսկ դպրոցի երգչախումբը 2014 և 2015 թթ-ին մասնակցել է Երևանում անցկացված «Երգող Հայաստան» մրցույթի հանրապետական փուլին՝ արժանացել մասնագետների գովեստին: Ամենամեծ հաջողությունը կարելի է համարել դպրոցի նախկին սան Անահիտ Դիլբարյանի մասնակցությունը դասական Եվրատեսիլ մրցույթին, որտեղ նա նվագակցում էր Հայաստանը ներկայացնող և երրորդ պատվավոր տեղը նվաճած Նարեկ Կազազյանին:

Դպրոցն ունի համերգային ոռյալի կարիք:

Գեղարվեստի դպրոցը գործում է Շահումյան 105 հասցեում՝ 2003թ. կառուցված հիմնական տիպային հարմարավետ, լուսավոր շենքում: Խմբերի թիվը՝ 9, աշակերտների թիվը՝ 65, աշխատակիցների թիվը՝ 10: Շենքը ջեռուցվում է գազի վառարաններով: Դպրոցում հիմնական ծրագրերից բացի զարգացնում են նաև դեկորատիվ-կիրառական արվեստի ազգային և ավանդական ճյուղեր՝ խեցեգործություն, ասեղնագործություն, գորբելեն և այլն: Ուսուցիչներն ունեն համապատասխան մասնագիտական կրթություն, նկատելիորեն բարձրացել է ուսման որակը, աշխատողների պատասխանատվությունը: Դպրոցի սաները մշտապես մասնակցում են համաքաղաքային, մարզային և հանրապետական մրցույթների և փառատոների՝ արժանանալով դիպլոմների, պատվոգրերի, շնորհակալագրերի, տարբեր մրցանակների: Գեղարվեստի դպրոցը որպես Լոռու մարզի լավագույն կրթամշակութային հաստատություն մասնակցել է հանրապետական «Արտ-էքսպո» ցուցահանդեսին, արժանացել մասնագետների բարձր գնահատականին: Դպրոցում մշտապես գործող պատկերասրահը պարբերաբար թարմացվում է գունանկար, գծանկար, գորբելեն, դեկորատիվ-կիրառական արվեստի ցուցանմուշներով: Սերտորեն համագործակցելով Գերմանիայում բնակվող դպրոցի նախկին ուսուցիչ Արարատ Հայդեյանի հետ, նրա հովանավորությամբ շարունակվում են դպրոցի սաների և ուսուցիչների փոխայցելությունները Գերմանիայի Դաշնություն, ուր

նրանք մասնակցել են միջազգային ցուցահանդեսների և վարպետության դասերի: 2014թ. դպրոցը մշակութային կրթության ոլորտում համարվել է Լոռու մարզի հենակետային ուսումնական հաստատություն:

Սպիտակի մշակույթի փունը 390 նստատեղով, գործում է Ս.Ավետիսյան 1 հասցեում, տիպային հիմնական կառույց է, որտեղ սովորում են 49 սաներ, աշխատակիցների թիվը՝ 13: Գործում են պարի, երգի և թատերական խմբեր: Մշակույթի տան գործունեությունը նպատակաուղղված է շնորհալի երեխաների և նրանց տաղանդի հայտնաբերմանը: Այստեղ կազմակերպվում են միջոցառումներ նվիրված ՀՀ պետական տոներին, հոբելյանական և հիշարժան տարեթվերին: Համույթները մշտապես մասնակցում են մարզային և հանրապետական փառատոների և մրցույթների, հաճախակի վերադառնում մրցանակներով, դիպլոմներով ու շնորհակալագրերով: 2016 թ. ձեռք է բերվել նոր ձայնալուսային տեխնիկա և սարքավորումներ:

Շենքը չի ջեռուցվում: Ենթակա է կապիտալ վերանորոգման:

Համայնքում գործում է **մեկ քաղաքային գրադարան**, որի գրքային ֆոնդը կազմում է 28694 օրինակ գիրք ու բրոշյուր և 1000 օրինակ ամսագրեր և լրագրեր: Գրադարանի թանգարանային բաժնի հիմնական ցուցանմուշների թիվը կազմում է 196 և գիտաօժանդակ նյութեր: Աշխատակիցների թիվը 15, որից 2-ը՝ թանգարանային բաժին, Ընթերցողների թիվը՝ 2446 մարդ: Թանգարանի այցելուների թիվը՝ 3373 մարդ: Գրադարանում իրականացվում են «Գրադարանային շաբաթ», «Գիշերային գրադարան», «Թանգարանային գիշեր» ծրագրերը և բազմաբնույթ այլ միջոցառումներ, որոնցում մեծ ուշադրություն է դարձվում երիտասարդության հետ տարվող աշխատանքներին՝ օգտագործելով նրանց ներուժը տարբեր միջոցառումներ կազմակերպելու համար: Սպիտակի համայնքի ավագանու 2014թ. հունիսի 30-ի N 30-Ա որոշմամբ «Սպիտակի թանգարան» ՀՈԱԿ-ը միացել է «Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ-ին:

Շինությունը ոչ տիպային է՝ հարմարեցված, խոնավությունը նորմայից բարձր: Անհրաժեշտություն են շենքային հիմնանորոգման, ջեռուցման համակարգի անցկացման, օդափոխության համակարգի տեղադրման, թանգարանային բաժնի մետաղյա կոնստրուկցիաներով հիմնավոր առանձնացման, անվտանգության համակարգի տեղադրման, ապակեպատ միջնորմերի տեղադրման, գրքային ֆոնդի համալրման, գույքի ձեռք բերման խնդիրները:

2016թ. սեպտեմբեր

Մ. Մելիքյան